# Արձանագրություն 1

<<Կրթություն ԿՈՌՈՒ>>ՍՊԸ դպրոցի սովորողների ընդհանուր ժողովի

2021 թ. սեպտեմբերի 6-ին <<Կրթություն ԿՈՌՈՒ>>ՍՊԸ դպրոցի տնօրենի կողմից հրավիրվեց սովորողների առաջին ընդհանուր ժողովը:

Նիստին մասնակցեցին բոլոր դասարանների (թվով 11) սովորողները, դպրոցի տնօրեն Տաթևիկ Կոստանյանն ու Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Աննա Աղայանը:

Օրակարգում՝

1.2021-2022 ուսումնական տարվա սկզբի հետ կապված տնօրենի ողջույնի խոսքը:
2.2021-2022 ուսումնական տարվա հաստատության աշակերտական խորհուրդ ձևավորելու մասին:
3.2021-2022 ուսումնական տարվա հաստատության աշակերտական խորհրդի կանոնադրությունը և ձևավորման կարգը հաստատելու մասին:
4. 2021-2022 ներքին գնահատման և ներքին կարգապահական կանոնների ծանոթացում:
5.2021-2022 ուսումնական տարվա հաստատության աշակերտական խորհրդի թվակազմը հաստատելու մասին:
6.2021-2022 ուսումնական տարվա հաստատության աշակերտական խորհրդի ընտրական հանձնախումբը հաստատելու մասին:
7.2021-2022 ուսումնական տարվա հաստատության սովորողների արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման մասին:

1.2021-2022 ուսումնական տարվա սկզբի հետ կապված տնօրենի ողջույնի խոսքը:

**Լսեցին:** <<Կրթություն ԿՈՌՈՒ>>ՍՊԸ դպրոցի տնօրեն Տաթևիկ Կոստանյանը ողջունեց ծնողներին և շնորհավորեց նոր ուսումնական տարվա սկզբի կապակցությամբ: Ներկայացրեց տարվա անելիքները: Ներկաներին տեղեկացրեց, որ չորրորդ և իններորդ դասարանների աշակերտները գրելու են տնօրենության կողմից գրավոր աշխատանքներ, որոնք տրվում են ուսման որակը և աշակերտների առաջադիմությունը բարձրացնելու համար:

**Որոշեցին:** ի գիտություն է ընդունում հաստատության գործունեության վերաբերյալ տնօրենի ամենամյա ուղերձը:

2.2021-2022 ուսումնական տարվա հաստատության աշակերտական խորհուրդ ձևավորելու մասին:

**Լսեցին:** <<Կրթություն ԿՈՌՈՒ>>ՍՊԸ դպրոցի ԴԱԿ Աննա Աղանյանը խոսեց աշակերտական խորհրդի կազմի ձևավորման մասին: Ներկայացրեց ընտրության կարգը□ այն է՝ աշակերտական խորհրդի անդամ կարող է դառնել յուրաքանչյուր դասարանից առավել ագույնը երկու աշակերտ, որը կընտրվի դասարանների դասարանական ժողովների ժամանակ փակ քվեարկության արդյունքում, այնուհետև առաջարկեց քվեարկության միջոցով հաստատել, թե յուրաքանչյուր դասարանից քանի աշակերտ կարող է դառնալ աշակերտական խորհրդի անդամ: Հավելեց նաև, որ աշակերտական խորհրդի անդամներից յուրաքանչյուրը կարող է աշակերտական խորհրդի նախագահի թեկնածու լինել:

**Որոշեցին:** Հաստատել հաստատությունում աշակերտական խորհուրդ ձևավորելը և հաստատել ընտրության կարգը:

3.2021-2022 ուսումնական տարվա հաստատության աշակերտական խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին:

**Լսեցին:** <<Կրթություն ԿՈՌՈՒ>>ՍՊԸ դպրոցի աշակերտական խորհրդի նախկին նախագահը ներկայացրեց ուսումնական հաստատության աշակերտական խորհրդի ձևավորման կարգը:

**Որոշեցին:** Հաստատել ուսումնական հաստատության աշակերտական խորհրդի ձևավորման կարգը:

4. 2021-2022 ներքին գնահատման և ներքին կարգապահական կանոնների ծանոթացում:

**Լսեցին:** <<Կրթություն ԿՈՌՈՒ>>ՍՊԸ դպրոցի դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչը ներկայացրեց 2021-2022 ու տարվա ներքին գնահատման և ներքին կարքապահական կանոնները:

**Որոշեցին:** ընդունել ներքին գնահատման և ներքին կարգապահական կանոնները:

5.2021-2022 ուսումնական տարվա հաստատության աշակերտական խորհրդի թվակազմը հաստատելու մասին:

**Լսեցին:** <<Կրթություն ԿՈՌՈՒ>>ՍՊԸ դպրոցի աշակերտական խորհրդի նախկին նախագահը ներկայացրեց աշակերտական խորհրդի թվակազմի ձևավորման կարգը, այն է՝ աշակերտական խորհուրդը ձևավորվում է դասարանների դասարանական ժողովներում՝ փակ քվեարկությամբ ընտրված մինչև երկու ներկայացուցչից:

**Որոշեցին:** Քանի որ դասարանների դասարանական ժողովում որպես աշակերտական խորհրդի անդամ ընտրվել է երկուական աշակերտ յուրաքանչյուր դասարանից, հետևաբար կազմը բաղկացած է:

6.2021-2022 ուսումնական տարվա հաստատության աշակերտական խորհրդի ընտրական հանձնախումբը հաստատելու մասին:

**Լսեցին:** Աշակերտական խորհրդի նախկին նախագահը ներկայացրեց, որ աշակերտական խորհրդի նախագահի ընտրությունը կազմակերպելու համար անհրաժեշտ է ստեղծել ընտրական հանձնախումբ, որը ձևավորվում է յուրաքանչյուր դասարանի խորհրդի կազմում չընդգրկված սովորողներից: Ներկայացրեց, որ ընտրական հանձնախումբը կազմակերպում և հաստատում է դասարանական խորհուրդների կազմը, դասարանական խորհուրդների արդյունքների հիման վրա հաստատում է աշակերտական խորհրդի կազմը, կազմակերպում աշակերտական խորհրդի նախագահի ընտրությունները: Հավելեց, որ ընտրական հանձնախումբը իր առաջին նիստում պետք է ընտրի նախագահ և առաջարկեց որպես ընտրության եղանակ՝ փակ գաղտնի քվերակությունը:

**Որոշեցին:** Հաստատել ընտրական հանձնախմբի կազմը և հանձնախմբի նախագահի ընտրությունը իրականացնել փակ գաղտնի քվերակությամբ: Ինչպես նաև հաստատել ընտրական հանձնախմբի հետևյալ կազմը՝

| Հ/Հ | Ազգանուն անուն | Դասարան |
|---|---|---|
| 1 | Իսայան Գեորգի | 8 |
| 2 | Յազիչյան Արման | 8 |
| 3 | Մարգարյան Էլեոնորա | 9 |
| 4 | Մեհրաբյան Ալեքս | 8 |
| 5 | Աթայան Միլենա | 8 |
| | | |
| | | |

7.2021-2022 ուսումնական տարվա հաստատության սովորողների արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման մասին:

**Լսեցին:** Ավագ դպրոցի ԴԱԿ Աննա Աղանյանը ներկայացրեց սովորողների արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կարևորության մասին, որոնք ոչ միայն նպաստում են գիտելիքի խորացմանը կամ նոր գիտելիքներ ձեռք բերելուն այլ նաև միջանձնային հարաբերությունների բարելավմանը: Ներկայացրեց, որ դպրոցում գործում է նկարչության խմբակ, որում սովորեցնում են գծանկարի և ջրաներկի հիմունքները: Առաջարկեց հատկապես տարրական դասարաններում սովորող աշակերտներին անպայման գրանցվել խմբակում: Առաջարկեց նաև, ըստ իրենց նախասիրությունների, մտածել և առաջարկներ ներկայացնել արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման հարցերի մասին:

**Որոշեցին:** Ցուցակագրել խմբակին մասնակցել ցանկացող աշակերտներին և ներկայացնել դպրոցի տնօրենությանը: Դասարանական ժողովներում քննարկել և հաջորդիվ աշակերտական խորհրդի քննարկմանն ու տնօրենությանը ներկայացնել արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման հարցերի մասին առաջարկները:

Աշակերտական խորհրդի նախագահ՝ /Ա.Հովակիմյան/

Քարտուղար՝ / Է. Ավանեսյան /

# Արձանագրություն 1

## <<Կրթություն ԿՈՌՈՒ>>ՍՊԸ դպրոցի սովորողների ընդհանուր ժողովի

2022 թ. սեպտեմբերի Ջ-ին <<Կրթություն ԿՈՌՈՒ>>ՍՊԸ դպրոցի տնօրենի կողմից հրավիրվեց սովորողների առաջին ընդհանուր ժողովը:

Նիստին մասնակցեցին բոլոր դասարանների (թվով 11) սովորողները, դպրոցի տնօրեն Նարինե Մալախյանն ու Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Աննա Աղանյանը:

Օրակարգում՝

1. 2022-2023 ուսումնական տարվա սկզբի հետ կապված տնօրենի ողջույնի խոսքը:
2. 2022-2023 ուսումնական տարվա համատաության աշակերտական խորհուրդ ձևավորելու մասին:
3. 2022-2023 ուսումնական տարվա համատաության աշակերտական խորհրդի կանոնադրությունը և ձևավորման կարգը հաստատելու մասին:
4. 2022-2023 ներքին գնահատման և ներքին կարգապահական կանոնների ծանոթացում:
5. 2022-2023 ուսումնական տարվա համատաության աշակերտական խորհրդի թվակազմը հաստատելու մասին:
6. 2022-2023 ուսումնական տարվա համատաության աշակերտական խորհրդի ընտրական հանձնախումբը հաստատելու մասին:
7. 2022-2023 ուսումնական տարվա համատաության սովորողների արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման մասին:

1. 2022-2023 ուսումնական տարվա սկզբի հետ կապված տնօրենի ողջույնի խոսքը:

**Լսեցին:** <<Կրթություն ԿՈՌՈՒ>>ՍՊԸ դպրոցի տնօրեն Նարինե Մալախյանը ողջունեց աշակերտներին և շնորհավորեց նոր ուսումնական տարվա սկզբի կապակցությամբ: Ներկայացրեց տարվա անելիքները: Ներկաներին տեղեկացրեց, որ 4-րդ և 9-րդ դասարանների աշակերտները գրելու են տնօրենության կողմից գրավոր աշխատանքներ, որոնք տրվում են ուսման որակը և աշակերտների առաջադիմությունը բարձրացնելու համար:

**Որոշեցին:** Ի գիտություն է ընդունում հաստատության գործունեության վերաբերյալ տնօրենի ամենամյա ուղերձը:

2.2022-2023 ուսումնական տարվա հաստատության աշակերտական խորհուրդ ձևավորելու մասին:

**Լսեցին** <<Կրթություն ԿՈՌՈՒ>>ՍՊԸ դպրոցի ԴԱԿ Աննա Աղանյանը խոսեց աշակերտական խորհրդի կազմի ձևավորման մասին: Ներկայացրեց ընտրության կարգը՝ այն է՝ աշակերտական խորհրդի անդամ կարող է դառնել յուրաքանչյուր դասարանից առավելագույնը երկու աշակերտ, որը կնտրվի դասարանների դասարանական ժողովների ժամանակ փակ քվեարկության արդյունքում, այնուհետև առաջարկեց քվեարկության միջոցով հաստատել, թե յուրաքանչյուր դասարանից քանի աշակերտ կարող է դառնալ աշակերտական խորհրդի անդամ: Հավելեց նաև, որ աշակերտական խորհրդի անդամներից յուրաքանչյուրը կարող է աշակերտական խորհրդի նախագահի թեկնածու լինել:

**Որոշեցին:** Հաստատել հաստատությունում աշակերտական խորհուրդ ձևավորելը և հաստատել ընտրության կարգը:

3.2022-2023 ուսումնական տարվա հաստատության աշակերտական խորհրդի կանոնադրությունը և ձևավորման կարգը հաստատելու մասին:

**Լսեցին:** <<Կրթություն ԿՈՌՈՒ>>ՍՊԸ դպրոցի աշակերտական խորհրդի նախկին նախագահը ներկայացրեց ուսումնական հաստատության աշակերտական խորհրդի կանոնադրությունն ու ձևավորման կարգը:

**Որոշեցին:** Հաստատել ուսումնական հաստատության աշակերտական խորհրդի կանոնադրությունն:

4. 2022-2023 ներքին գնահատման և ներքին կարգապահական կանոնների ծանոթացում:

**Լսեցին:** <<Կրթություն ԿՈՌՈՒ>>ՍՊԸ դպրոցի դաստիարակական աշխատանքների կազմակերպիչը ներկայացրեց 2022-2023 ուստարվա ներքին գնահատման և ներքին կարքապահական կանոնները:

**Որոշեցին:** ընդունել ներքին գնահատման և ներքին կարգապահական կանոնները:

5.2022-2023 ուսումնական տարվա հաստատության աշակերտական խորհրդի թվակազմը հաստատելու մասին:

**Լսեցին:** «Կրթություն ԿՈՌՈՒ»ՍՊԸ դպրոցի աշակերտական խորհրդի նախկին նախագահը ներկայացրեց աշակերտական խորհրդի թվակազմի ձևավորման կարգը, այն է՝ աշակերտական խորհուրդը ձևավորվում է դասարանների դասարանական ժողովներում՝ փակ քվեարկությամբ ընտրված մինչև երկու ներկայացուցչից:

**Որոշեցին:** Քանի որ դասարանների դասարանական ժողովում որպես աշակերտական խորհրդի անդամ ընտրվել է երկուական աշակերտ յուրաքանչյուր դասարանից, հետևաբար կազմը բաղկացած է:

6.2022-2023 ուսումնական տարվա հաստատության աշակերտական խորհրդի ընտրական հանձնախումբը հաստատելու մասին:

**Լսեցին:** Աշակերտական խորհրդի նախկին նախագահը ներկայացրեց, որ աշակերտական խորհրդի նախագահի ընտրությունը կազմակերպելու համար անհրաժեշտ է ստեղծել ընտրական հանձնախումբ, որը ձևավորվում է յուրաքանչյուր դասարանի խորհրդի կազմում չընդգրկված սովորողներից: Ներկայացրեց, որ ընտրական հանձնախումբը կազմակերպում և հաստատում է դասարանական խորհուրդների կազմը, դասարանական խորհուրդների արդյունքների հիման վրա հաստատում է աշակերտական խորհրդի կազմը, կազմակերպում աշակերտական խորհրդի նախագահի ընտրությունները: Հավելեց, որ ընտրական հանձնախումբը իր առաջին նիստում պետք է ընտրի նախագահ և առաջարկեց որպես ընտրության եղանակ՝ փակ գաղտնի քվերակությունը:

**Որոշեցին:** Հաստատել ընտրական հանձնախմբի կազմը և հանձնախմբի նախագահի ընտրությունը իրականացնել փակ գաղտնի քվերակությամբ: Ինչպես նաև հաստատել ընտրական հանձնախմբի հետևյալ կազմը՝

| Հ/Հ | Ազգանուն անուն | Դասարան |
|---|---|---|
| 1 | Գալստյան Արփի | 8 |
| 2 | Մնացականյան Մեսրոպ | 7 |
| 3 | Իսրայելյան Աշոտ | 7 |
| 4 | Վանյան Մարիա | 7 |
| 5 | Հովակիմյան Մարիա | 6 |
| 6 | Իսայան Գեորգի | 9 |
| 7 | | |
| 8 | | |

7.2022-2023 ուսումնական տարվա հաստատության սովորողների արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման մասին:

**Լսեցին:** դպրոցի ԴԱԿ Աննա Աղանյանը ներկայացրեց սովորողների արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կարևորության մասին, որոնք ոչ միայն նպաստում են գիտելիքի խորացմանը կամ նոր գիտելիքներ ձեռք բերելուն այլ նաև միջանձնային հարաբերությունների բարելավմանը: Ներկայացրեց, որ դպրոցում գործում է նկարչության խմբակ, որում սովորեցնում են գծանկարի և ջրաներկի հիմունքները: Առաջարկեց հատկապես տարրական դասարանների աշակերտներին անպայման գրանցվել խմբակում: Առաջարկեց նաև, ըստ իրենց նախասիրությունների, մտածել և առաջարկներ ներկայացնել արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման հարցերի մասին:

**Որոշեցին:** Ցուցակագրել խմբակին մասնակցել ցանկացող աշակերտներին և ներկայացնել դպրոցի տնօրենությանը:
Դասարանական ժողովներում քննարկել և հաջորդիվ աշակերտական խորհրդի քննարկմանն ու տնօրենությանը ներկայացնել արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման հարցերի մասին առաջարկները:

Աշակերտական խորհրդի նախագահ՝ /Է.Գալստյան/

Քարտուղար՝ /Մ.Աթայան/

# Արձանագրություն 4

2022 թ․ նոյեմբերի 18-ին հրավիրվեց <<Կրթություն ԿՈՌՈՒ>>ՍՊԸ դպրոցի աշակերտական խորհրդի հերթական նիստը։

Նիստին մասնակցեցին աշակերտական խորհրդի բոլոր անդամները (թվով 10), դպրոցի տնօրեն Նարինե Մալախյանը ու Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Աննա Աղանյանը։

Օրակարգում՝

1․Սովորողների կարգապահության և դասերին հաճախելու մասին։

2․Ծանոթացում ներքին կարգապահական կանոններին, սովորողների իրավունքներին և պարտականություններին։

3․Տնօրենության ներկայացվող առաջարկությունների մասին։

4․Սովորողների կարգապահության և դասերին հաճախելու մասին։

**Լսեցին:** <<Կրթություն ԿՈՌՈՒ>>ՍՊԸ դպրոցի ԴԱԿ Աննա Աղանյանը խոսեց այն մասին, որ առավելագույնս պետք է կանխել անհարկի բացակայություններն ու ուշացումները։ Առաջարկեց դասարանների ղեկավարների և դասարանական ծնողական կոմիտեների հետ համատեղ փորձել հնարավորինս վերացնել ուշացումներն ու անհարկի բացակաները։

**Որոշեցին:** Դիմել դասարանների ղեկավարներին և միասին լուծել ուշացումների և անհարկի բացակայությունների հարցը։

5․Ծանոթացում ներքին կարգապահական կանոններին, սովորողների իրավունքներին և պարտականություններին։

**Լսեցին:** դպրոցի ԴԱԿ Աննա Աղանյանը կարդաց <<Կրթություն ԿՈՌՈՒ>> ՍՊԸ դպրոցի ներքին կարգապահական կանոնները, բացատրեց աշակերտներին նրանց իրավունքներն ու պարտականությունները։ Ասաց, որ սովորողներից յուրաքանչյուրը իրավունք ունի որակյալ կրթություն ստանալ ու, անվճար օգտվել ու դպրոցի

ուսումնամանկավարժական ողջ բազայից, իրավունք ունի պաշտպանել իր ֆիզիկական և հոգեբանական առողջությունը ցանկացած տեսակի բռնությունից, սակայն հավելեց, որ աշակերտ պարտավոր է դասերին ներկայանալ հավուր պատշաճի՝ առանց ուշացումների, պահպանելով սանիտարահիգիենիկ կանոնները, դասագրքերով և տետրերով, լինել բարեկիրթ և հարգալից: նաև ասաց զմեռային արձակուրդների ընթացքում կազմակերպել այցեր մշակութային համալիրներ:

**Որոշեցին:** Ներքին կարգապահական կանոնների կետերը ընդունել ի գիտություն և կետերից ցանկացածի կոպիտ խախտման դեպքում հարցը դնել քննարկման:

6. Տնօրենության ներկայացվող առաջարկությունների մասին:

**Լսեցին:** Աշակերտական խորհրդի նախագահ Էմմա Գալստյանն առաջարկեց մեկ անգամ ևս քննարկել Հաստատության ներքին կարգապահական կանոնների կետերը և անել առաջարկներ կանոնները համալրելու և թարմացնելու համար:

Առաջարկեց սովորողների ժամանցի ապահովման համար ներկայացնել դպրոցում երեժշտական խմբերի բացում: Արձակուրդների ընթացքում առավել հաճախակի այցելություններ կատարվեն մշակութային կենտրոններ:

Գիտելիքի յուրացման որակի բարձրացման համար առաջարկեց բարձր առաջադիմություն ունեցող աշակերտներին դասերից հետո օգնել իրենց տարիքային խմբի ավելի ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներին օգնել նյութը յուրացնելու հարցում: Նշեց, որ բացի գիտելիքի յուրացումից աշխատանքի այս ձևը կնպաստի նաև միջանձնային հարաբերությունների բարելավմանն ու առավել շատ ընկերներ ձեռք բերելուն:

**Որոշեցին:** Աշակերտական խորհրդի նախագահի առաջարկները ներկայացնել տնօրենությանը:

Աշակերտական խորհրդի նախագահ /Է.Գալստյան/

Քարտուղար / Մ. Աթայան/

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԿՈՐՈՒ» «KPTYTHH KOPY» «KRTUTYUN KORU» 02652216

# Արձանագրություն 5

<<Կրթություն ԿՈՌՈՒ>>ՍՊԸ դպրոցի սովորողների ընդհանուր ժողովի

2022 թ. մայիսի 12-ին հրավիրվեց <<Կրթություն ԿՈՌՈՒ>>ՍՊԸ դպրոցի սովորողների երրորդ ընդհանուր ժողովը:

Նիստին մասնակցեցին, բոլոր դասարանների (թվով 11) սովորողները, դպրոցի տնօրեն Նարինե Մալախյանն ու Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Աննա Աղանյանը:

Օրակարգում՝

2.2021-2022 ուսումնական տարվա աշակերտական խորհրդի և աշակերտական խորհրդի նախագահի հաշվետվություն:

3.

2.2021-2022 ուսումնական տարվա աշակերտական խորհրդի և աշակերտական խորհրդի նախագահի հաշվետվություն:

**Լսեցին:** Ախ նախագահ Էմմա Գալստյանը ներկայացրեց 2020-2021 ուսումնական տարվա աշակերտական խորհրդի հաշվետվությունը այն է՝

2021 թվականի սեպտեմբերի 1-ին տեղի ունեցավ «Գիտելիքի տոն» միջոցառումը, նշեմ, որ կազմակերպչական առումով միջոցառումը թերի էր: Նորամուտ դպրոցականներին ողջունեց դպրոցի տնօրենը և դասղեկների ուղեկցությամբ հրավիրեց դպրոցի բոլոր դասարանների աշակերտներին: Դասերն իրականացվում էին խմբերով:

Սեպտեմբեր ամսվա երկրորդ շաբաթվա ընթացքում դասարաններում ներկայացրին դպրոցի ներքին կարգապահական կանոնները, աշակերտների պարտականություններն ու իրավունքները, ներկայացվեցին պատժամիջոցները (առաջարկել օրինական ներկայացուցչին խախտում կատարած աշակերտին տեղափոխվել այլ ուսումնական հաստատություն):

Դեկտեմբերին կամզակերպվեց հանդիպում ոստիկանի հետ: Աշակերտների հետ ընտանեկան բռնության մասին զրույց անցկացրեցին:

Դեկտեմբեր ամսին ֆրանսերենի և իտալերենի ուսուցիչները կազմակերպեցին և անցկացրեցին միջոցառում «Քաջ Նազար» խորագրով՝ նվիրված Հայաստանում ֆրանկոֆոնիայի օրերին:

Դեկտեմբերի 24-ին կազմակերպվեց «Նոր տարի» միջոցառումը:

2022 թվականի հունվարից հունիս ամիսներին շարունակվել են 2021-22 ուսումնական տարվա II կիսամյակի ընթացքում իրականացվող բոլոր կազմակերպչական աշխատանքները:

Կազմակերպվել է 12րդ դասարանցիների ավարտական, 4-րդից մինչև 11րդ դասարանցիների փոխադրական քննությունների անցկացումը, վկայականների հանձնման գրաֆիկ՝ համավարակի պատճառով ստեղծված պայմաններից ելնելով, պահպանվել են բոլոր սանիտարա-հիգիենիկ կանոնները, արգելվել են աշակերտների, նրանց ծնողների և ուսուցիչների բոլոր տեսակի կուտակումները և հավաքները ինչպես դպրոցում, այնպես էլ բաց տարածքներում: Բոլոր վերը նշված միջոցառումները անցկացվել են հավուր պատշաճի, առանց բարդությունների և դիտողությունների:

Կազմակերպվել և անցկացվել է ավարտական դասարանի «Վերջին դաս» միջոցառումը

**Որոշեցին:** Յավանության արժանացնել աշակերտական խորհրդի հաշվետվությունը, գնահատել բավարար, բացթողումները շտկել:

Աշակերտական խորհրդի նախագահ՝ /Է.Գալստյան/

Քարտուղար՝ /Մ.Աբալյան/